ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«02» մայիսի 2019թ No 1047-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 2006-Ա ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 10-ի «Դեղերի անվտանգության, արդյունավետության, որակի վրա աղդող՝ Հայաստանի Հանրապետություն ներկրվող դեղերի և Հայաստանի Հանրապետությունում գրանցանմուշների հետ փաթեթավորման անհամապատասխանությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 2006-Ա հրամանը:

5/2/2019

X

VERIFIED OCSP 5/2/2019 17:32:45 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Մուտքագրվեց
Հոլոգրամի վնաս
Կոպ ☐
Ստացման
03 MAY 2019 ժամ 15:
№ 42-28
Ընդունվեց և ստուգվեց ինքնության և լիազորության

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին,4-րդ մասերին, 7-րդ մասի 1-ին, 8-րդ մասի 5-րդ կետերին և 10-րդ մասին համապատասխան հաստատվել է «Հայաստանի Հանրապետության տարածք դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք և հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծելու և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու, ներմուծման կամ արտահանման նպատակով փորձաքննության իրականացման կարգերը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի N 581 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը (28 փետրվարի 2019 թվականի թիվ 202-Ն որոշում):

Վերոնշյալ կառավարության որոշմամբ սահմանվել են ՀՀ առողջապահության նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 2006-Ա հրամանով հաստատված անհամապատասխանությունները:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում չգրանցված կամ որակի պահանջներին չհամապատասխանող կամ պիտանիության ժամկետն անցած կամ գրանցումն ուժը կորցրած ճանաչված կամ գրանցումը կասեցված կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ ներմուծված դեղերի, կեղծ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի մասին ահազանգի ծանուցման, շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը (28 փետրվարի 2019 թվականի թիվ 164-Ն որոշում):

Վերոնշյալ կառավարության որոշմամբ սահմանվել են ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի փետրվարի 24-ի թիվ 303-Ա հրամանով հաստատված կարգի ընթացակարգերը:

Հաշվի առնելով վերոգրյալը Առողջապահության նախարարության կողմից մշակվել է հրամանների նախագիծ՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 10-ի «Դեղերի անվտանգության, արդյունավետության, որակի վրա աղդող՝ Հայաստանի Հանրապետություն ներկրվող դեղերի և Հայաստանի Հանրապետությունում գրանցանմուշների հետ փաթեթավորման անհամապատասխանությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 2006-Ա և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի փետրվարի 24-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, բժշկական նշանակության այլ արտադրանքի և կենսակտիվ սննդային հավելումների շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) կարգը, հետկանչի մասին ահազանգի ծանուցման և հետկանչի իրականացման վերաբերյալ տեղեկատվության ձևերը հաստատելու մասին» թիվ 303-Ա հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին: